

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ԱՅՍ ՎԱՐԿԱՏԵՍԱԿՆ ՈՒՆԻ ԲԱՐՁՐ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ: ՈՒՍՏԻ ՆԱԽԱՊԵՍ ԴԻՏԱՐԿԵՔ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԿԱ ՆՄԱՆԱՏԻՊ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏԵՔ ՎԱՐԿԸ ՄԱՐԵԼՈՒ ՁԵՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:**

**ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

| «Բարի ճանապարհ»<br>Վարկ առաջնային շուկայում ավտոմեքենա ձեռքբերելու համար |  |
|--|--|
| Վարկերի տրամադրման աշխարհագրական շրջանակը                                | Հայաստանի Հանրապետություն  |
| Նպատակային նշանակությունը  | Առաջնային շուկայում ավտոմեքենայի ձեռքբերում  |
| Առաջնային շուկայում ներգրավված ավտոմեքենաներ                             | Ճապոնական, Եվրոպական, Ամերիկյան, ինչպես նաև Հարավ-կորեական արտադրության ավտոմեքենաներ (միայն ավտոսրահից) |
| Պոտենցիալ Վարկառուներ  | 1. ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք<br>2. Տարիքային սահմանափակում՝ 21-60 տարեկան              |
| Տրամադրվող գումարի մեծությունը   | մինչև 15.000.000 ՀՀ դրամ, բայց ոչ ավել քան ձեռքբերվող ավտոմեքենայի արժեքի 70%                            |
| Տարեկան անվանական տոկոսադրույքը  | սկսած 10%-ից մինչև 24%   |
| Տարեկան փաստացի տոկոսադրույք   | 10.54%-ից մինչև 67.82%   |
| Վարկի ժամկետը  | 1-ից մինչև 36 ամիս   |
| Կանխավճարի չափը  | Ձեռք բերվող ավտոմեքենայի արժեքի 30%  |
| Վարկի դիմում-հայտի ուսումնասիրության վճար                                | 5.000 ՀՀ դրամ  |
| Վարկի գումարի տրամադրման միջնորդավճար                                    | Տրամադրվող գումարի 0-2 %-ի չափով   |
| Վարկի սպասարկման վճար  | Ամսական՝ 0-ից մինչև 5000 ՀՀ դրամ   |

|   |   |
|---|---|
| Վարկի մայր գումարի վաղաժամկետ մարում                      | Սահմանափակումներ չկան   |
| Գրավի առարկա  | Ձեռք բերվող ավտոմեքենա  |
| Ապահովագրություն  | Պարտադիր գույքային /ԿԱՄԿՈ/  |
| Վարկառուի այլ ծախսերը                                     | Գրավի առարկայի գնահատման, վերագնահատման, նոտարական, պետական գրանցման և ձևակերպման, ապահովագրական (անհրաժեշտության դեպքում), վարկի ամսական սպասարկման վճարներ և այլ ծախսեր                         |
| Վարկային պարտավորությունների կատարման ապահովման միջոցները | Երաշխիք/երաշխավորություն և/կամ անշարժ/շարժական գույք, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այլ եղանակներ  |
| Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետը                  | 1 աշխատանքային օր՝ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո  |
| Տոկոսագումարների հաշվարկման և վճարման կարգը               | Տոկոսագումարի հաշվարկը կատարվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ օրական կտրվածքով և ենթակա է վճարման ամսական պարբերականությամբ   |
| Ժամկետանց վարկի գումարի գծով հաշվարկվող տույժ             | 0.13% չափով տույժ ժամկետանց վարկի մայր գումարի նկատմամբ՝ ամեն ժամկետանց օրվա համար  |
| Ժամկետանց տոկոսագումարի գծով հաշվարկվող տույժ             | 0.13% չափով տույժ ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ՝ ամեն ժամկետանց օրվա համար   |
| Վարկառուի վարկային պատմության հանդեպ պահանջներ            | 1. Գործող վարկը չպետք է լինի ժամկետանց վարկային պատմության ստուգման պահին:<br>2. Ժամկետանց օրերի քանակը բոլոր վարկերի գծով վերջին 12 ամիսների ընթացքում չպետք է գերազանցի 30 օրացուցային օրը:     |
| Երաշխավոր   | 1. Երաշխավոր՝ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձ<br>2. Երաշխավորի հանդեպ պահանջներ՝ վարկառուի հանդեպ պահանջներին համանման  |
| Աշխատանքային ստաժ   | 1. 6 ամիս չընդհատված աշխատանքային փորձ վերջին աշխատանքային վայրում:<br>2. Հաճախորդի հիմնական աշխատանք չունենալու, թոշակառու կամ ժամանակավորապես անաշխատունակ լինելու դեպքում նա պետք է ունենա այլ |

Եկամուտներ: Եկամուտների տակ  
հասկացվում են վարձակալությունից  
ստացված եկամուտները, թոշակները,  
կազմակերպություն հանձնած բերքի  
(ապրանքի) դիմաց գյուղատնտեսական  
եկամուտներ, ձեռնարկատիրական  
գործունեությունից ստացված  
եկամուտներ, ինչպես նաև այլ  
եկամուտներ: